ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1 , 403 սենյակ
հեռ (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավար
Պարոն Հ. Սահակյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սահակյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,
խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

«Վալլեքս» խմբի ընկերությունների մեջ մտնող «Թեղուտ» ՓԲԸ-ն նախատեսում է Լոռու մարզի անտառային տարածքներում, Շնող գետի ավազանում/Ալավերդի, Շնող, Հաղպատ, Ծաղկաշատ, Նեղոց/, իրականացնել պղնձի եւ մոլիբդենի որոնման աշխատանքներ:

1. Ե՞րբ է Ձեզ ներկայացվել հայտի փաթեթը եւ ո՞ւմ կողմից
2. Տրվե՞լ է արդյոք Ձեր կողմից գրավոր համաձայնություն՝ համայնքում ուսումնասիրման աշխատանքներ իրականացնելու համար, եթե այո, խնդրում եմ տրամադրել նշված փաստաթղթի պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝
Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Անուշ Էվոյան

24.08.2015թ.